

նակից է Աղվանքին և Կուր գետին, հետո Գուգարքը (Գոգարենե)։ Ամբողջ այս երկիրը (նկատի ունի Կուր գետի աջափնյա շրջանը. հեղ.) առատ է պտուղներով, այգիներով և մշտադալար բույսերով և տալիս է նույնիսկ ձիթապտուղ՝⁷⁴։

Մի այլ տեղ Ստրաբոնը, անդրադառնալով սակերի (շակերի) արշավանքների հարցին, գրում է, որ «Հայաստանում նրանք տիրացել են լավագույն հողերին, որոնց տվել են իրենց անունը՝ Շակաշեն»⁷⁵։

5. Կ Լ Ի Մ Ա

Հայկական լեռնաշխարհի կլիման պայմանավորված է նրա դիրքով և երկրի բարձր ռելիեֆով։

Մթնոլորտի շրջանառությունը Առաջավոր Ասիայում իր առանձնահատկություններն ունի և սեզոնային փոփոխություններ է կրում։ Ձմեռվա ընթացքում Առաջավոր Ասիայի վրա տարածվում է Կենտրոնական Ասիայի խորքերից եկած չոր, ցամաքային օդային զանգվածների լայն հոսանքը։ Այդ ձմեռային օդային հոսանքը, որպես կանոն, իշխում է նոյեմբերից մինչև մարտ, բայց առավել մեծ ուժի է հասնում հունվարին։ Սակայն հաճախ օդի ձմեռային հոսանքը խախտվում է դեպրեսիաներով (մթնոլորտային ճնշման իջեցման տարածությունը)։

Կարելի է նշել Առաջավոր Ասիայի կլիմայի վրա ազդող դեպրեսիաների հիմնական երկու ուղի։ Առաջին ուղին այն դեպրեսիաներն են, որոնք կուտակվում են Բալթիկ ծովի վրա, ցածր ճնշման ընդարձակ շրջանից և շարժվում են դեպի Սև ծով. այդ պատճառով էլ դրանք, որպես կանոն, ընդգրկում են Սև ծովի պոնտական ափը միայն։ Պոնտական լեռնաշղթան արգելակում է նրանց տարածումը Հայկական լեռնաշխարհի խորքերում։ Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա անհամեմատ ավելի մեծ ազդեցություն են գործում այն դեպրեսիաները, որոնք կուտակվում են էգեյան ծովի վրա և տարածվում Փոքր Ասիայում ու Հայկական լեռնաշխարհում։

Դեպրեսիաների տարածումը և սառը օդի զանգվածների դրան հաջորդող ներխուժումը սովորաբար առաջ է բերում ձյան առատ տեղումներ, որոնք իշխում են Հայկական լեռնաշխարհում գրեթե ամենուր։ Եզրային լեռնաշղթաների բարձունքների վրա համատարած ձյունածածկոցը պահպանվում է տարվա ցուրտ ժամանակի ողջ ընթացքում։

Ձմռան ամիսների ընթացքում նույնիսկ գոգահովիտներում գոյանում է ձյան զգալի շերտ, որը հասնում է 1,5 մ. բարձրության և պահպանվում է մինչև ապրիլ ամիսը։ Հայկական լեռնաշխարհում ցրտի կենտրոններն են Կարսի և Կարինի (Էրզրումի) սարահարթերը⁷⁶։

Օդի շրջանառությունը վճռական փոփոխություններ է կրում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին, կապված օդի ամառային հոսանքների առաջացման հետ։ Անձրևները տեղում են գլխավորապես մայիս ամսին, կապված միջերկրածովյան մթնոլորտային ճնշման նվազագույնների՝ մինիմումների անցման հետ։

⁷⁴ Strabo, XI, 14, 4.

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, XI, 8, 4.

⁷⁶ Տե՛ս Շ. Н. Матвеев, Турция (Азиатская часть—Анатолия), физико-географическое описание, М.—Л., 1946, էջ 36—40.

Տարվա այս ժամանակամիջոցում թափանցող դեպրեսիաները վերընթաց շարժման ընթացքում ինտենսիվ ամպրոպային երևույթներ են առաջացնում: Դրանց հաճախ գումարվում են տեղական (շերմային) ամպրոպները լեռնապարերի մոտերքում:

Օդի շրջանառության, ջերմաստիճանի և տեղումների ռեժիմի այս առանձնահատկությունները պայմանավորված են Հայկական լեռնաշխարհի ռելիեֆով և կլիմայական բազմազան պայմաններ են ստեղծում երկրի տարբեր շրջաններում:

Հայկական լեռնաշխարհում ներկայացված են կլիմայի երեք հիմնական դոտի. ա) փոքրասիական տիպի չոր մերձարևադարձային (օրինակ, Վանա լճի ավազանը), բ) արալա-կասպիական տիպի չոր ցամաքային (Արարատյան դաշտը) և գ) փետրախոտային տափաստանների կլիմա (բարձրադիր հրաբխային սարահարթեր):

Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանների վրա մեծ ազդեցություն է թողնում երկրի ռելիեֆը: Հայաստանի լեռնապարերի զուգահեռականային ուղղությունը ազդում է ջերմաստիճանի իջեցման վրա երկրի հարավից դեպի հյուսիս անցնելիս:

Շրջակա երկրների համեմատությամբ Հայկական լեռնաշխարհի կլիման աչքի է ընկնում զգալի խստությամբ, հատկապես Կենտրոնական հրաբխային բարձրավանդակի տերիտորիայում: Այստեղ կլիման խիստ ցամաքային է, մոտ տափաստանային կլիմային: Կարինում (էրզրումում) և Կարսում հինգ ամսվա ընթացքում, նոյեմբերից մինչև մարտ, ամսվա միջին ջերմաստիճանը զրոյից ցածր է: Բացարձակ նվազագույնը Կարսում հասնում է $-43^{\circ}, 5'$: Ընդհանուր առմամբ Կենտրոնական հրաբխային բարձրավանդակի համար բնորոշ է ցուրտ ձմեռը և զով ամառը:

Փակ գոգավորությունների համար բնորոշ է ուժեղ ջերմացումը ցերեկվա և շեշտակի սառեցումը՝ գիշերվա ընթացքում:

Լեռնաշխարհի եզրային լեռնաշղթաները, ներքին սարահարթերի համեմատությամբ, աչքի են ընկնում զգալիորեն ավելի մեծ խոնավությամբ, քանի որ եզրային բարձր լեռնապարերը արգելակում են մոտակա ծովերից եկող խոնավ օդի հոսանքների մուտքը: Այդ պատճառով էլ լեռնաշխարհի ծայրամասային շրջաններում համեմատաբար առատ տեղումներ են լինում, մինչդեռ Կենտրոնական սարահարթերում դրանք քիչ են: Այսպես, օրինակ, Ղոզիում և Սևանա լճի ավազանում տեղումների միջին քանակն է 500—600 մմ: Խարբերում՝ մոտ 600 մմ, Շիրակում՝ 400—500 մմ, Դիարբեքիրում՝ 408 մմ: Լեռնաշխարհի ալպիական գոտում հարաբերական խոնավությունն, այնուամենայնիվ, ավելանում է, ամպամածությունը աճում է և ցանքերը ավելի ապահովված են խոնավությամբ:

Զգալիորեն քիչ է տեղումների քանակը լեռնաշխարհի ցածրադիր վայրերում: Արարատյան դաշտում, օրինակ, տեղումները լինում են գերազանցապես զարնանը, 150—300 մմ: Ամենաչոր վայրը Արալի գյուղն է (ծովի մակերևույթից 790 մետր բարձր) Արարատի ստորոտում: Այստեղ տեղումների միջին քանակն է 160 մմ: Երևանում (1000 մ ծովի մակերևույթից բարձր) տեղումների տարեկան քանակն է 318 մմ, ըստ որում ամենից շատ տեղումներ

լինում են մայիսին, ամենից քիչ՝ օգոստոսին։ Ամառը Երևանում շոգ է (հուլիս-օգոստոսի միջին ջերմաստիճանն է 25), ձմեռը՝ ցուրտ (հունվարի միջինը՝ —6,4)։

Ամենաուժեղ տատանումները ձմռան ու ամռան միջև դիտվում են Արաքսի հովտում։ Ամռանն այստեղ նույնքան շոգ է, որքան արալա-կասպիական ցածրավայրում։ Մյուս կողմից ձմռանը, սառն օդի ելքի դժվարության հետևանքով, Արարատյան դաշտում է տեղավորվում անտիցիկլոնային շրջանը (Հայկական անտիցիկլոն)։ Շրջակա լեռներից Արաքսի հովիտն են ներխուժում սառը օդի հոսանքները, որոնք կանգնելով այնտեղ, ձմեռը դարձնում են բավականաչափ խստաշունչ։ Հունվարի միջին ջերմաստիճանն է —11,5-ից մինչև —8։

Ավելի տաք և մեղմ կլիմա ունի Տիգրիս գետի հովտում ընկած Աղձնիք նահանգը։ Այստեղ, Հայկական Տավրոսից հարավ, ձմռան միջին ջերմաստիճանն է 3—6։ Անձրևներ տեղում են նաև ձմռանը։

6. ՀՈՒԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Հայկական լեռնաշխարհի հողերի տեսակները պայմանավորված են երկրի ղոնալուծվածքով և ենթարկվում են ուղղահայաց ղոնալուծվածքի օրինաչափությանը։ Դա արտահայտվում է նրանով, որ Հայաստանում առկա են հողերի բոլոր տեսակները՝ սկսած անապատային և կիսաանապատային հողերից մինչև անտառային ու լեռնային մարդագետինների հողերը⁷⁷։

Լեռնաշղթաների կատարներին և բարձր լեռնագագաթների վրա կան իսկական ալպիական՝ սովորաբար շիկակարմիր և վարդագույն, քիչ մոխրակերպ տորֆային հողեր։

Մերձալպիական գոտում գերակշռում են հացահատիկային մարգագետինների սեահողային տիպի և բազմախոտ բույսերի շագանակագույն հողերը։

Բարձր լեռնային գոտում հյուսիսային և հարավային լանջերին հողերը շեշտակիորեն տարբերվում են միմյանցից։ Ալպիական գոտում հյուսիսային լանջերի հողերը, հարավայինների համեմատությամբ, ավելի մուգ, համարյա սև երանգների հասնող գույն ունեն։ Մերձալպիական գոտու հյուսիսային լանջերին գերակշռում են զարգացած, սեահողային տիպի հողերը, իսկ հարավային լանջերի հողերը խիստ խճուղ և քարքարոտ են։

Անտառային հողերը Հայկական լեռնաշխարհում քիչ են, բայց հնում նրանց գրաված տարածությունն ավելի մեծ է եղել։ Հայկական լեռնաշխարհի անտառային հողերին բնորոշ է մորֆոլոգիական թույլ արտահայտված մոխրակերպությունը։

Հայկական լեռնաշխարհում ամենից ավելի տարածված են տարբեր տեսակի տափաստանային հողերը, որոնք զբաղեցնում են հրաբխային սարահարթերի և հարթավայրերի տարածության մեծ մասը, ինչպես նաև լայն հովիտներն ու գոգավորությունները։ Տափաստաններին բնորոշ է իսկական (սեւագույն) սեահողը՝ կարբոնատների ցածր հորիզոնով։ Այդ շրջաններում տեղումներն ամենից ավելի առատ են՝ 500—550 մմ։

⁷⁷ Տե՛ս А. Л. Тахтаджян, Ботанико-географический очерк Армении, Тбилиси—Ереван, 1941.